ԴԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնամեթոդական ձեռնարկ



Կարեն Հովհաննեսի
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2026

Երաշխավորվել է հրատարակության
Գավառի պետական համալսարանի
Գիտական խորհրդի
կողմից 25.04.2026թ.-ին

Երաշխավորվել է հրատարակության
«Փորձաքննությունների ազգային
բյուրո» ՊՈԱԿ-ի Գիտական խորհրդի
կողմից 11.06.2026թ.-ին

Կարեն Հովհաննեսի
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Հրատարակիչ՝
«ՖԻՆԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ

ԵՐԵՎԱՆ
2026

ՀՏԴ 343.148(07)
ԳՄԴ 67.535գ7
Մ 223

Հեղինակ՝ ***Կարեն Հովհաննեսի ՄԱՄԻԿՈՆՅԱՆ***
Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ,
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների
համակարգման բաժնի պետ (Գիտական խորհրդի քարտուղար),
դատական փորձագետ, ԳՊՀ դասախոս

Գրախոսներ՝ ***Ռուզաննա Խաչիկի ՀԱԿՈԲՅԱՆ***
Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր
Լիանա Հայկազի ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ
Արմեն Գեորգիի ՍԱՖԱՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր
Սամվել Գրիգորի ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի
Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ

Մամիկոնյան Կ.Հ.
Մ 223 ***Դատական տնտեսագիտական փորձաքննություն****: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կ.Հ. Մամիկոնյան. - Եր.: ՖԻՆԷՔՍՊԵՐՏ, 2026.- 380 էջ:*

Ձեռնարկում ներկայացվել են դատական փորձագիտական գործունեության տեսական, իրավական և կազմակերպման հիմքերը, բացահայտվել են դատական տնտեսագիտական փորձաքննության առարկան, խնդիրներն ու հետազոտման օբյեկտները, ինչպես նաև տնտեսագիտական փորձագիտական հետազոտությունների մեթոդների համակարգը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կազմակերպության անվճարունակության հատկանիշների որոշման փորձագիտական հետազոտության առանձնահատկություններին, ակտիվների և բիզնեսի շուկայական կապիտալացման խնդիրներին, ինչպես նաև քրեական վարույթի նախաքննության ու դատական քննության փուլերում ծագող տնտեսագիտական բնույթի փորձագիտական խնդիրների լուծման մեթոդական մոտեցումներին:

Ձեռնարկը նախատեսված է ֆինանսներ և հաշվապահական հաշվառում ոլորտում դասավանդողների, ասպիրանտների և ուսանողների համար, այն հատկապես օգտակար կարող է լինել դատական փորձագետներին, քննիչներին, փաստաբաններին, դատավորներին և այն մասնագետներին, ովքեր իրենց գործունեության ընթացքում առնչվում են դատահաշվապահական և դատաֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների խնդիրներին:

ՀՏԴ 343.148(07)
ԳՄԴ 67.535գ7

ISBN 978-9939-0-5886-3

© Մամիկոնյան Կ.Հ., 2026

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գլուխ 1. ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 9
1.1 Դատական փորձագիտական գործունեությունը 9
1.2 Հատուկ գիտելիքների կիրառման տիրույթը 12
1.3 Դատական փորձագետի իրավական կարգավիճակը 20
1.4 Փորձագետի եզրակացությունը, կարծիքը, ցուցմունքը 22
1.5 Դատական փորձաքննության նշանակման ու իրականացման իրավական կարգը 26

Գլուխ 2. ԴԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ 32
2.1 Դատական տնտեսագիտական փորձաքննության նպատակը և խնդիրը 32
2.2 Դատական տնտեսագիտական փորձաքննության հետազոտման առարկան և օբյեկտները 34
2.3 Դատական տնտեսագիտական փորձաքննության տեսակների դասակարգումը 42
2.4 Հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի կազմման, կանխիկ ու անկանխիկ գործառնությունների իրականացման նորմատիվային պահանջները 47

Գլուխ 3. ԴԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 55
3.1 Աուդիտի, ֆինանսական ստուգման և տնտեսագիտական փորձաքննության նպատակների ու մեթոդական հիմքերի համեմատական բնութագրերը 55
3.2 Դատական տնտեսագիտական փորձաքննության մեթոդների համակարգը 72
3.3 Ֆիզիկական անձանց անօրինական եկամուտների բացահայտման տնտեսագիտական փորձաքննության մեթոդաբանական հիմքերը 78
3.4 Պետությանը պատճառված վնասի տնտեսագիտական փորձաքննության մեթոդաբանական հիմքերը 86

3.5 Կորպորատիվ կառավարման համակարգում տնտեսագիտական փորձաքննության մեթոդաբանական հիմքերը 97

Գլուխ 4. ԴԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ...106
4.1 Կազմակերպության անվճարունակության հատկանիշների որոշման տնտեսագիտական փորձաքննության առանձնահատկությունները.....106
4.2 Կազմակերպության անվճարունակության հատկանիշների որոշման տնտեսագիտական փորձաքննության միջազգային փորձը 115
4.3 Կազմակերպության անվճարունակության հատկանիշների որոշման տնտեսագիտական փորձաքննության մեթոդաբանության խնդիրները..... 131
4.4 Ակտիվների գնահատումը կազմակերպության անվճարունակության հատկանիշների որոշման տնտեսագիտական փորձաքննության կիրառական մեթոդաբանության հիմքում 138

Գլուխ 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 145
5.1 Ընկերության զուտ ակտիվները 145
5.2 Ընկերության բաժնետոմսերի շուկայական արժեքը 149
5.3 Ընկերության բաժնեմասերի շուկայական արժեքը 154
5.4 Ընկերության ակտիվների շուկայական արժեքի որոշման սկզբունքները 156
5.5 Կազմակերպության հիմնական միջոցների արժեքը.....164

Գլուխ 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԱՑՈՒՄԸ... 188
6.1 Շուկայական կապիտալացման էությունը 188
6.2 Ընկերության գույքի ապրանքագիտական բնութագրերի, շուկայական արժեքի և ընկերության կապիտալացման փոխկապակցվածությունը..... 198
6.3 Ընկերության մտավոր սեփականության օբյեկտի շուկայական արժեքը 221
6.4 Ընկերության շուկայական արժեքի ստացումը ապագա դրամական հոսքերի զեղչմամբ 232

Գլուխ 7. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՐԶՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ 246
7.1 Բաց թողնված օգուտի չափի որոշումը..... 246
7.2 Ընկերության մասնակցի բաժնեմասնակցության չափի որոշումը 256
7.3 Ընկերության բաշխման ենթակա շահույթի չափի որոշումը. 259
7.4 Ապրանքային նշանի արժեքի որոշումը 267
7.5 Համակարգչային ծրագրի արժեքի որոշումը..... 279
7.6 Վեբ կայքի արժեքի որոշումը 288
7.7 Գյուտի, հայտնագործության, արդյունաբերական նմուշի արժեքի որոշումը..... 300
7.8 Փոխառությունների ներգրավման, խոշոր առևտրային կամ այլ գործարքների իրականացման հիմքերի վերլուծական հիմնավորմամբ անվճարունակության հատկանիշների որոշումը 313
7.9 Վարկային պայմանագրի ավարտից մինչև պարտավորության դադարումն ընկած ժամանակահատվածի համար վնասի հատուցման տոկոսագումարի որոշումը 323
7.10 Ֆինանսական խարդախությունների դատական տնտեսագիտական փորձաքննության համալիր գործոնների և բացահայտման մոտեցումների որոշումը 332
7.11 Ֆինանսական բուրգի՝ որպես տնտեսական երևույթի բնորոշ հատկանիշների և տնտեսահրավական բնութագրերի որոշումը. 351

ԳԻՏԵԼԻՔԻ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ 366

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 370

ՆԱԽԱԲԱՆ

Տնտեսական հարաբերությունների խորացման, շուկայական տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի որակական զարգացման և կատարելագործման, ֆինանսատնտեսական գործունեության կառուցվածքային ու գործառնական առումով բարդացման և բազմազանեցման պայմաններում տնտեսական ու իրավական վեճերի, տնտեսական հանցագործությունների, ինչպես նաև կորպորատիվ հակասությունների քննության գործընթացում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում հատուկ գիտելիքների կիրառումը:

Այս համատեքստում դատական փորձաքննությունը, իսկ դրա շրջանակներում՝ դատական տնտեսագիտական փորձաքննությունը, հանդես է գալիս որպես դատավարական գործունեության կարևոր ինստիտուտ, որը հնարավորություն է տալիս մասնագիտական հատուկ գիտելիքների, գիտականորեն հիմնավորված վերլուծական մեթոդների կիրառմամբ փորձագիտական հետազոտության արդյունքում բացահայտել և հիմնավորել տնտեսական բնույթի փաստական հանգամանքները: Դատական տնտեսագիտական փորձաքննության իրականացումը (կատարումը) հնարավորություն է տալիս համակողմանիորեն ուսումնասիրել կատարված տնտեսական գործառնությունների իրական ֆինանսատնտեսական բովանդակությունը, գնահատել տնտեսական գործունեության արդյունքները և հիմնավոր կերպով ապահովել դատավարական գործընթացում ներկայացված ապացույցների ամբողջական և օբյեկտիվ գնահատումը:

Տնտեսական գործունեության բազմազանությունը, ֆինանսական գործառնությունների աճող բարդությունը, ինչպես նաև կորպորատիվ կառավարման, ակտիվների գնահատման, ֆինանսական վերահսկողության և շուկայական արժեքի որոշման ոլորտներում առաջացող խնդիրները պայմանավորում են տնտեսագիտական փորձաքննության մեթոդաբանական և կիրառական հիմքերի համակարգված ուսումնասիրության անհրաժեշտությունը: Ժամանակակից իրավակարգավորումների և դատավարական

ինստիտուտների զարգացման պայմաններում տնտեսագիտական փորձաքննությունը նշանակվում է ոչ միայն քրեական և քաղաքացիական դատավարության շրջանակներում, այլև տնտեսական վեճերի լուծման, ֆինանսական խախտումների բացահայտման, վնասների չափի որոշման, կազմակերպության անվճարունակության հատկանիշների, նրա ակտիվների և բիզնեսի արժեքի որոշման գործընթացներում:

Աշխատանքում ներկայացված մոտեցումների խորապատկերին դիտարկվել են դատական տնտեսագիտական փորձաքննության մեթոդաբանական խնդիրներ և առաջարկվել ֆինանսատնտեսագիտական վերլուծության տեսակետից դրանց լուծման համար կիրառական մեթոդական մոտեցումներ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այնպիսի տնտեսական իրավիճակների վերլուծությանը, որոնք առավել հաճախ հանդիպում են դատական և նախաքննական պրակտիկայում:

Ձեռնարկը ներառում է յոթ գլուխներ, որոնք տրամաբանական հաջորդականությամբ ներկայացնում են դատական տնտեսագիտական փորձաքննության տեսական հիմքերը, իրավական կարգավորումը, մեթոդաբանական մոտեցումները և կիրառական խնդիրները:

Առաջին գլխում ներկայացված են դատական փորձագիտական գործունեության տեսական, իրավական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև փորձագետի իրավական կարգավիճակը և դատավարական գործընթացում հատուկ գիտելիքների կիրառման առանձնահատկությունները:

Երկրորդ գլխում բացահայտվում է դատական տնտեսագիտական փորձաքննության էությունը, նպատակը, խնդիրները, հետազոտման առարկան և օբյեկտները, ինչպես նաև ներկայացվում է դրա տեսակների դասակարգումը:

Երրորդ գլխում դիտարկվում են տնտեսագիտական փորձաքննության կիրառական մեթոդաբանական հիմքերը, այդ թվում՝ աուդիտի, ֆինանսական ստուգման և տնտեսագիտական փորձաքննության համեմատական բնութագրերը, ինչպես նաև տարբեր

ոլորտներում փորձագիտական հետազոտությունների իրականացման մեթոդական մոտեցումները:

Հաջորդ գլուխներում ուսումնասիրվում են դատական տնտեսագիտական փորձաքննության կիրառական խնդիրները՝ կապված կազմակերպությունների անվճարունակության հատկանիշների որոշման, ակտիվների և բիզնեսի արժեքի գնահատման, շուկայական կապիտալացման, ինչպես նաև տարբեր տնտեսական իրավիճակներում առաջացող փորձագիտական կոնկրետ հարցերի լուծման հետ, այդ թվում՝ բաց թողնված օգուտի չափի որոշման, ընկերությունում բաժնեմասնակցության չափի և բաշխման ենթակա շահույթի հաշվարկման, մտավոր սեփականության օբյեկտների արժեքի որոշման, փոխառությունների ներգրավման և խոշոր գործարքների տնտեսական հիմնավորվածության վերլուծության միջոցով անվճարունակության հատկանիշների բացահայտման, վարկային պարտավորությունների կատարման ժամկետների խախտման, ինչպես նաև ֆինանսական բուրգերին՝ որպես տնտեսական երևույթի բնորոշ հատկանիշների ու տնտեսահիրավական բնութագրերի բացահայտման, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործարքների տնտեսական հիմնավորվածության գնահատման հետ կապված խնդիրների համատեքստում:

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

КАРЕН ОГАНЕСОВИЧ МАМИКОНЯН
доктор экономических наук, доцент

KAREN H. MAMIKONYAN
Doctor of Philosophy (PhD) in Economics,
Associate Professor

ԴԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Հրատարակիչ՝
«ՖԻՆԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ

Չափսը՝ 60x84 * 1/16:
Ծավալը՝ 23.8 տպգ. մամուլ:

ԵՐԵՎԱՆ
2026

ISBN 978-9939-0-5886-3

Դատական տնտեսագիտական փորձաքննությունը դատավարական գործունեության կարևոր ինստիտուտ է, որը հնարավորություն է տալիս մասնագիտական հատուկ գիտելիքների և գիտականորեն հիմնավորված վերլուծական մեթոդների կիրառմամբ փորձագիտական հետազոտության արդյունքում բացահայտել և հիմնավորել տնտեսական բնույթի փաստական հանգամանքներ